ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 5 մարտի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23–րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու

մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2239-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ .**

1. «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվա քաղաքում՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության (այսուհետ՝ 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրություն) մեջ փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Արձանագրությունը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի, Բելառուսի Հանրապետության հարկերի և գանձումների նախարարության, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարությանն առընթեր պետական հարկային ծառայության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության միջև:

3. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

4. Արտաքին գործերի նախարարության՝ Արձանագրության վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին եզրակացության և Արձանագրությունը ստորագրած կողմերի՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ «2023 թվականի հոկտեմբերի 18-ի դրությամբ Արձանագրությունն ուժի մեջ չի մտել: 2023 թվականի հոկտեմբերի 18-ի դրությամբ Արձանագրությունը ստորագրած կողմերից որևէ մեկը չի ավարտել Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

Արձանագրությամբ կատարվող փոփոխությունները ենթադրում են ԵԱՏՄ անդամ պետությունների հարկային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման պարբերականության կրճատում՝ տեղեկատվության ստացման և մշակման օպերատիվությունը բարձրացնելու նպատակով: Միաժամանակ, նախատեսվում է 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությունը լրացնել Հավելված 3-ով, որը սահմանում է փոխանակվող տեղեկատվության կազմին և կառուցվածքին ներկայացվող պահանջները: Նախատեսվում են նաև տեխնիկական և խմբագրական բնույթի մի շարք փոփոխություններ:

Ընդհանուր առմամբ, նախատեսվող փոփոխությունների նպատակն է ԵԱՏՄ անդամ պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման հետ կապված իրավահարաբերությունների կատարելագործումը և անուղղակի հարկերի մուտքերի նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացումը»:

5. Արձանագրության համաձայն՝ Արձանագրության Հավելվածում սահմանված կարգով փոփոխություններ են կատարվում 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ, մասնավորապես՝ 2-րդ Հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ պարբերությունները շարադրվում են այլ խմբագրությամբ, 2-րդ Հոդվածի 9-րդ և 10-րդ պարբերություններից հետո լրացվում են նոր պարբերություններ, նշված արձանագրությունը լրացվում է թիվ 3 Հավելվածով (այն, իր հերթին, ունի 16 հավելվածներ), որը ներառում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների (այսուհետ՝ հարկային մարմիններ) միջև՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների վերաբերյալ տեղեկատվության փոխանցման նիշքերի ձևաչափերի կազմի և կառուցվածքի նկարագրությունը:

6. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա՝ ի լրումն 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների կամ դրանց փոխարեն, ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- հայտերի ռեեստրների, հարցումների ռեեստրների և ծանուցումների ռեեստրների փոխանակումն իրականացնել յուրաքանչյուր շաբաթ՝ շաբաթվա առաջին աշխատանքային օրը (Հավելված, կետ 1, ենթակետ «բ»).

- ապահովել, որ ձևաչափատրամաբանական հսկողության (այսուհետ նաև՝ ՁՏՀ) հաղորդակարգի մեջ այն կազմելու ժամանակ առաջացած սխալների առկայության դեպքում հայտերի ռեեստրն ստացող ՀՀ հարկային մարմինը վերացնի հաղոր-

դակարգը կազմելու սխալները, կրկին կազմի ձևաչափատրամաբանական հսկողության հաղորդակարգ և, նախքան հայտերի ռեեստրների հերթական փոխանակումն իրականացնելը, այն ուղարկի հայտերի ռեեստրի ուղարկող հարկային մարմին (Հավելված, կետ 1, ենթակետ «դ»).

- ապահովել, որ ՀՀ հարկային մարմինը մյուս կողմերի հարկային մարմինների հետ էլեկտրոնային ձևով փոխանակվի բյուջե վճարված անուղղակի հարկերի գումարների մասին տեղեկատվությամբ (Հավելված 3, կետ 1.1).

- ապահովել, որ հարկային մարմինների միջև հայտերի ռեեստրների նիշքերի ձևով հայտերով, հարցումների ռեեստրի ձևով հարցումներով, ծանուցումների ռեեստրի ձևով հարցումներին պատասխաններով տեղեկատվության փոխադարձ փոխանակումն իրականացվի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ սահմանված կարգով և ժամկետներում (Հավելված 3, կետ 1.3).

- ապահովել, որ ՀՀ հարկային մարմինը մյուս կողմերի հարկային մարմինների հետ տեղեկատվության փոխադարձ փոխանակումն իրականացնի արձանագրության 3-րդ Հավելվածի պահանջներին և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվության փոխանակման կարգը կանոնակարգող այլ ակտերին համապատասխան, ինչպես նաև հայտերի ռեեստրի նիշքն ստանալիս կատարի ստացված տվյալների ձևաչափատրամաբանական հսկողություն՝ արձանագրության թիվ 15 հավելվածի համաձայն, և ձևավորի ՁՏՀ հաղորդակարգ, որի ձևաչափի նկարագրությունը բերված է Արձանագրության 6-րդ բաժնում (Հավելված 3, կետ 1.4, պարբերություններ 1, 2).

- ապահովել, որ ՁՏՀ հաղորդակարգեր ստանալուց և նույնականացնելուց հետո ուղարկող ՀՀ հարկային մարմինը միջոցներ ձեռնարկի սխալները վերացնելու ուղղությամբ և ուղղված տեղեկատվությունն ուղարկի ստացող հարկային մարմին՝ 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ սահմանված կարգով և ժամկետներում (Հավելված 3, կետ 1.5).

- ապահովել, որ հարկային մարմինների միջև էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխադարձ փոխանակման դեպքում օգտագործվեն արձանագրության 3-րդ հավելվածի 1.6-րդ կետում շարադրված միասնական դասակարգիչները և

տեղեկագրքերը, իսկ տեղեկագրքի մեջ փոփոխություններ կատարելու դեպքում փոփոխությունները կատարելու օրվանից 10 օրից ոչ ուշ այն փոխանցի ամբողջական թարմացված տեղեկագրքի ձևով (Հավելված 3, կետ 1.6, պարբերություններ 1 և 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

5 մարտի 2024 թվականի
ՍԴՈ-1717